ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ԲԱԽՇՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բախշյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.03.2018թ. հ.Ե-3/134 գրության, տեղեկացվում է.

Ասիական զարգացման բանկի կողմից «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման» ծրագրով Երևան քաղաքի հ.15 դպրոցի հիմնանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրվել են, իսկ հ.68 դպրոցի համար ընթանում է նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման նախապատրաստական գործընթացը:

Երևանի հ.191 դպրոցում կատարվում են ընթացիկ շինարարական աշխատանքներ, կառուցվում է տանիքի ընդհանուր կավարամածը, իրականացվում են սանհանգույցների սալիկապատման աշխատանքները:

Երևանի հ.22 դպրոցում ներկայումս շինարարական աշխատանքները դադարեցված են:

Երևանի հ.91 դպրոցում շարունակվում են հիմնանորոգման աշխատանքները:

Ամրացման աշխատանքներին զուգահեռ կատարվում են միջնորմերի շարման, էլեկտրալարերի մոնտաժման և գաջապատման աշխատանքները:

Երևանի հ.143 դպրոցում վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են:

Երևանի հ.135 դպրոցի շենքի հիմքը մասամբ է կառուցվել, շարունակվում են շինարարական աշխատանքները (Ասիական զարգացման ծրագիր):

Երևանի հ.153 դպրոցի շենքի հիմքն ամբողջովին կառուցված է: Ավարտված են 1-ին հարկի բետոնացման աշխատանքները, հանդիսությունների դահլիճի պատերը կառուցված են, սպորտ դահլիճը պատրաստ է մասամբ (Ասիական զարգացման ծրագիր):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ